

«ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՀԱՇՏԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»

Գլուխ 1. ՆԱԽԱԲԱՆ

«ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն իրականացնում է հաշտարարական ծառայությունների մատուցում՝ ՀՀ օրենսդրության և սույն կանոնների դրույթներին համապատասխան:

Սույն կանոններում ամրագրված դրույթները կարող են կիրառվել միայն «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող հաշտարարության շրջանակներում:

1.1. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1.1.1. «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվության ընկերության կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն, որը հանդիսանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշտապես գործող հաշտարարական հաստատություն/գրասենյակ:
- 1.1.2. **Հաշտարարություն՝** վեճերի լուծման արտադատական գործընթաց՝ երրորդ անկողմնակալ և չեզոք կողմի՝ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, ով օգնում է վեճի շրջանակներում ներգրավված և հաշտարարության դիմած կողմերին՝ գտնել վեճի լուծման վերաբերյալ փոխադարձ համաձայնություն:
- 1.1.3. **Հաշտարար՝** «Բեսթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի աշխատակից, ով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանդիսանում է արտոնագրված հաշտարար և որպես անկողմնակալ երրորդ անձ՝ հաշտարարության վերաբերյալ համաձայնության հիման վրա իրականացնում է հաշտարարություն:
- 1.1.4. **Կողմեր՝** անձինք, որոնք ներգրավված են հաշտարարության գործընթացում և ցանկանում են լուծել իրենց վեճը հաշտարարության միջոցով:
- 1.1.5. **Հաշտարարության այլ մասնակիցներ՝** անձինք, ովքեր կողմերի և հաշտարարի համաձայնությամբ մասնակցում են հաշտարարության գործընթացին:
- 1.1.6. **Հաշտարարության վերաբերյալ համաձայնություն՝** քաղաքացիաիրավական, աշխատանքային կամ ընտանեկան որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված գրավոր առանձին համաձայնություն կամ պայմանագրում վեճերը հաշտարարության միջոցով լուծելու վերաբերյալ նախատեսված կանոնակարգում՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերը հաշտարարության միջոցով լուծելու վերաբերյալ:
- 1.1.7. Հաշտության համաձայնություն՝ կողմերի միջև հաշտարարության արդյունքում ձեռք բերված փոխհամաձայնություն, որով կողմերի միջև առկա վեճը լուծվել է:

1.1.8. Հաշտարարական գրասենյակի ղեկավար՝ «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի տնօրենը, ով զբաղվում է «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից / շրջանակներում իրականացվող հաշտարարության ընդհանուր կազմակերպմամբ, ղեկավարմամբ և վերահսկողությամբ:

Գլուխ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 2.1.** Սույն կանոնագրքով սահմանվում են «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից/ շրջանակներում իրականացվող հաշտարարության կանոնները:
- 2.2.** Սույն կանոնները նախատեսված են ոլորտում բոլոր տեսակի՝ քաղաքացիական, ընտանեկան և աշխատանքային գործերով հաշտարարություններում այն կիրառելու նպատակով:
- 2.3.** Հաշտարարն իր գործունեությունը կարող է իրականացնել միայն «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի շրջանակներում:
- 2.4.** «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի հաշտարարները իրավասու են վեճերի լուծման նպատակով կիրառել Կողմերի շահերից բխող տարբեր մեթոդներ՝ հետևելով «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի հաշտարարի վարքագծի կանոններին:
- 2.5.** Հաշտարարություն կարող է նշանակվել ինչպես ամբողջ վեճով, այնպես էլ որոշակի մասով, եթե այդ մասի առանձին լուծումը հնարավոր է հաշտարարության միջոցով:
- 2.6.** Հաշտարարության գործընթացը իրականացվում է՝ կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկողմնակալության սկզբունքների հիման վրա:
- 2.7.** «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ»-ի շրջանակներում հաշտարարությունն իրականացվում է հնարավորինս սեղմ ժամկետում՝ հաշվի առնելով հաշտարարության վերաբերյալ համաձայնության մեջ առկա ժամկետները:
- 2.8.** Հաշտարարության ընթացքում որևէ փաստի ընդունումը չի կարող հիմք հանդիսանալ հետագայում կողմերի միջև դատավարության կամ այլ գործընթացներում այդ փաստը հաստատված համարելու համար:
- 2.9.** Արբիտրաժի լուծմանը չի կարող հանձնվել այն վեճը, որը քննվում է հաշտարարության միջոցով: Արբիտրաժի լուծմանը չի կարող հանձնվել նաև այն վեճը, որի վերաբերյալ առկա է հաշտարարության վերաբերյալ համաձայնություն, և այդպիսի համաձայնության հիման վրա հաշտարարության միջոցով վեճը լուծելու հնարավորությունը չի վերացել:

Գլուխ 3. ՀԱՇՏԱՐԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

- 3.1.** Կողմերի միջև առաջացած վեճը հաշտարարությամբ լուծելու խնդրանքով «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին դիմած կողմերի համար սովյալ վեճով հաշտարար

նշանակում է հաշտարարական գրասենյակի ղեկավարը, եթե կողմերը հաշտարարության վերաբերյալ համաձայնությամբ կամ այլ կերպ չեն սահմանել հաշտարարին ընտրելու հատուկ ընթացակարգ:

- 3.2. Հաշտարար նշանակելիս հաշվի է առնվում գրասենյակի հաշտարարների մասնագիտացման և ծանրաբեռնվածության աստիճանը:
- 3.3. Այն դեպքերում, երբ կողմերի միջև առաջացած վեճը քննվում կամ քննվել է Դատարանում, ապա հաշտարարի նշանակման համար անհրաժեշտ է Դատարանի համապատասխան որոշում:
- 3.4. Հաշտարարը համաձայնում է հաշտարարությունը անցկացնել միայն այն գործերով, որոնց համար նա ունի համապատասխան մասնագիտական պատրաստվածություն:
- 3.5. Հաշտարարը համաձայնեցնում է կողմերի հետ հաշտարարության անցկացման համապատասխան օրն ու ժամը:
- 3.6. Հաշտարարության ընթացքում կողմերին պարզաբանվում է հաշտարարության էությունը և հաշտարարի բնույթը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, հաշտության համաձայնության բնույթն ու հետևանքները:
- 3.7. Հաշտարարությունը կարող է իրականացվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին հանդիպումների միջոցով: Թույլատրվում է օգտագործել նաև հաղորդակցման այլ եղանակներ՝ համապատասխան տեխնիկական հնարավորությունների օգտագործմամբ:
- 3.8. Հաշտարարության ընթացքում հաշտարարն իր նախաձեռնությամբ կարող է հանդիպումներ կազմակերպել ինչպես հաշտարարության բոլոր կողմերի հետ միաժամանակ, այնպես էլ հաշտարարության յուրաքանչյուր կողմի հետ առանձին:
- 3.9. Հաշտարարության ընթացքում վեճին առնչվող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով հաշտարարի նախաձեռնությամբ կամ կողմի (կողմերի) միջնորդությամբ հաշտարարության գործընթացին կարող է մասնակից դարձվել փորձագետ (փորձագետներ):
- 3.10. Հաշտարարության ընթացքում վեճին առնչվող որոշակի հարցերի ու հանգամանքների պարզաբանման նպատակով հաշտարարի նախաձեռնությամբ կամ կողմի (կողմերի) միջնորդությամբ հաշտարարության գործընթացին կարող են մասնակից դարձվել այլ մասնակիցներ:
- 3.11. Յուրաքանչյուր կողմ, ինչպես նաև հաշտարարը, ցանկացած պահի կարող է դադարեցնել հաշտարարության գործընթացը: Հաշտարարի կողմից հաշտարարության գործընթացը դադարեցնելու դեպքում վերջինս պարտավոր է գործընթացը դադարեցնելու օրվանից սկսած 3-օրյա ժամկետում հաշտարարական գրասենյակի ղեկավարին գրավոր ձևով ներկայացնել հաշտարարության գործընթացը դադարեցնելու պատճառի մասին տեղեկություն:
- 3.12. Հաշտարարության ընթացքում հաշտարարը պարտավոր է խստորեն պահպանել «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՄՊԸ-ի «Հաշտարարի վարքագծի կանոնները» և ՀՀ օրենսդրության պահանջները:

Գլուխ 4. ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Հաշտարարը պարտավոր է հաշտարարության գործընթացն իրականացնել կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

4.2. Կամավորություն.

4.2.1. Ոչ ոք չի կարող պարտադրել հաշտարարին իր կամքին հակառակ մասնակից դառնալ հաշտարարության գործընթացի և իրականացնել հաշտարարություն:

4.2.2. Յուրաքանչյուր կողմ, ինչպես նաև հաշտարարը, ցանկացած պահի կարող է դադարեցնել հաշտարարության գործընթացը:

4.3. Գաղտնիություն.

4.3.1. Գաղտնիությունը հաշտարարության գործունեության էությունն է: Հաշտարարության ընթացքում բացահայտած կամ արտահայտած տեղեկությունները գաղտնի են: Գաղտնի են համարվում նաև հաշտարարության ընթացքում վեճի վերաբերյալ հաշտարարին ներկայացված համապատասխան գրավոր փաստաթղթերը, կրիչները և այլ նյութերը: Բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերի, հաշտարարը, կողմերը կամ հաշտարարությանը մասնակցած կամ մասնակցող յուրաքանչյուր անձ չի կարող կանչվել դատարան որպես վկա, մասնագետ կամ փորձագետ՝ ցուցմունք տալու հաշտարարության ընթացքում հայտնի դարձած փաստի կամ տեղեկության վերաբերյալ:

4.3.2. Հաշտարարը կարող է հաշվետվություն ներկայացնել իրավասու դատարան հաշտարարության գործընթացին կողմերի մասնակցության և գործընթացի արդյունքների մասին, եթե դա ուղղակիորեն սահմանված է օրենքով:

4.3.3. Հաշտարարը կարող է առանց կողմերի տվյալները հրապարակելու գործի փաստերն ու արդյունքներն օգտագործել գիտական ու ուսումնական նպատակներով:

4.3.4. Գաղտնիության պարտականությունը ժամանակով սահմանափակված չէ, եթե այլ բան չի նախատեսված հաշտարարության մասնակիցների միջև կնքված պայմանագրով:

4.4. Կողմերի հավասարություն.

4.4.1. Հաշտարարության գործընթացում կողմերը հավասար են՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

4.5. Անկողմնակալություն.

- 4.5.1.** Տվյալ գործով հաշտարարությունը ստանձնելու պահից մինչև գործընթացի ավարտը Հաշտարարը զբաղեցնում է չեզոք դիրք և ձգտում է թույլ չտալ կողմնակալ և կանխակալ վերաբերմունք որևէ կողմի նկատմամբ:
- 4.5.2.** Հաշտարարը չպետք է սկսի գործընթացը կամ, եթե սկսել է այն, պետք է դադարեցնի, եթե բացահայտել է հանգամանքներ, որոնք կարող են ազդել իր անկողմնակալության վրա և/կամ առաջացնել շահերի բախում՝ դրանց վերաբերյալ անհապաղ տեղեկացնելով հաշտարարական գրասենյակի ղեկավարին և կողմերին: Նման հանգամանքների դեպքերում՝ կողմերի համաձայնությամբ հաշտարարը կարող է սկսել կամ շարունակել հաշտարարությունը, եթե հաշտարարը վստահ է, որ կարողանալու է պահպանել իր լիակատար անկախությունն ու անկողմնակալությունը՝ ապահովելով բացարձակ չեզոքություն:
- 4.5.3.** Հաշտարարը ինքնաբացարկ հայտարարելով՝ պարտավոր է հրաժարվել հաշտարարության գործընթաց իրականացնելուց, եթե հաշտարարության ընթացքում ի հայտ գա այնպիսի շահերի բախում, որը կարող է հանգեցնել լուրջ կասկածի հաշտարարի անաչառության վերաբերյալ: Եթե գործը ընդունելուց կամ հաշտարարությունը սկսելուց հետո հաշտարարը բացահայտում/տեղեկանում է հարցի մասին, որը կարող է ստեղծել հավանական կամ իրական շահերի բախում կամ դրա տպավորություն, հաշտարարը պետք է անհապաղ բացահայտի այն կողմերին: Բացահայտումից հետո, եթե բոլոր կողմերը համաձայն են, ապա հաշտարարը կարող է շարունակել հաշտարարությունը:
- 4.5.4.** Հաշտարարը չպետք է սկսի գործընթացը, քանի դեռ բոլոր կողմերը չեն բացահայտել որևէ առկա կամ հնարավոր շահերի բախում և հրաժարվել այդ կապակցությամբ ունեցած իրենց իրավունքներից: Եթե շահերի բախումը լուրջ կասկածի տակ է դնում գործընթացի անկախությունը, հաշտարարը պետք է անհապաղ, ինքնաբացարկ հայտնելով, հրաժարվի գործընթացից: Եթե մեկից ավելի հաշտարար է նշանակված, յուրաքանչյուրը պետք է տեղեկացնի մյուսներին բացահայտված շահերի ու հարաբերությունների վերաբերյալ:

Գլուխ 5. ՀԱՇՏԱՐԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 7.1.** Հաշտարարը երաշխավորում է հաշտարարության անցկացումը և դրա համապատասխանությունը սույն կանոններին, «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի «Հաշտարարի վարքագծի կանոններին» և ՀՀ օրենսդրությանը:

7.2. Հաշտարարը ենթակա է պատասխանատվության սույն կանոնների պահանջները խախտելու համար:

Գլուխ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 8.1. Սույն կանոնները հետադարձ ուժ չունեն:
- 8.2. Սույն կանոնները կարող են փոփոխվել «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից, սակայն արդեն իսկ ընթացող հաշտարարության գործընթացն իրականացվում է հաշտարարությունը սկսելու պահին գործող կանոնների համաձայն:
- 8.3. Սույն կանոնները ընդունվել են «ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի միակ մասնակցի կողմից 2016թ.-ի մայիսի 25-ին:

